

ՀԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՖԼՈՐԱՅԻ ԾԱԾԿԱՍԵՐՄ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ԿԱՐԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կ. Վ. Բալայան

Հադրութի շրջանն աչքի է ընկնում բուսական համակենցությունների ու բուսատեսակների արտահայտված բազմազանությամբ, որը տարածքի բարդ ֆիզաշխարհագրական դիրքի արդյունք է: Հադրութի շրջանի ֆլորայի հարաբերական հարստությունը պայմանավորված է նաև աճելավայրերի էկոլոգիական պայմանների բազմազանությամբ: Ըստ Ա. Լ. Թախտաջյանի բուսաաշխարհագրական շրջանացման սխեմայի /1978/, միջանկյալ տեղ գրավելով երկու, խիստ հակասական բնույթի՝ Կովկասյան և Իրանաթուրանական ֆլորիստիկ մարզերի շփման սահմանագծում, Հադրութի շրջանի ֆլորան իր մեջ ամփոփում է և մեզոֆիլ, և քսերոֆիլ բուսատեսակներ [1]:

Աշխատանքում ամփոփվում են 2008 – 2011 թվականների ընթացքում մեր կողմից իրականացված գիտական հետազոտությունների արդյունքները: Ուսումնասիրությունները կատարվել են երթուղային, գիտական գույքագրման, հերքարիումային նյութի հավաքման, բուսատեսակների որոշման, քարտեզագրման և երկրաբուսաբանությունում համընդհանուր ճանաչում գտած ժամանակակից մեթոդներով: Աշխատանքի նպատակն է բացահայտել Հադրութի շրջանի տարածքում վայրի աճող ծածկասերմ խոտաբույսերի տեսակային բազմազանությունը, գերիշխող տաքսոնները և ներկայացնել բուսատեսակների կենսաբանական առանձնահատկությունները, տարածվածությունն ու էկոլոգիան: Աշխատանքի ներկայացման համար հիմք են հանդիսացել անձնական հավաքները: Աշխատանքային նյութեր հավաքելու և ուսումնասիրվող տարածքը հետազոտելու համար իրականացրել ենք գիտարշավներ, որոնց ընթացքում կատարել ենք Հադրութի շրջանի տարածքում վայրի աճող ծածկասերմ խոտաբույսերի գիտական գույքագրում, ինչպես նաև կենսային եղանակով քարտեզագրել գերիշխող ընտանիքների տարածման արեալները /քարտեզ 1/: Բույսերի տեսակային կազմը որոշել ենք բուսաբանության դասական որոշիչներով [2, 3, 4]: Դաշտային հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքները ներկայացնում ենք աղյուսակ 1 –ում :

Հադրութի շրջանի ֆլորայի ծածկասերմ խոտաբույսերի
բազմազանությունն ըստ ընտանիքների, գեղերի և տեսակների

Աղյուսակ 1

h/h	Ընտանիքի անվանումը /հայերեն, լատիներեն/	Ցեղերի քանակը	Տեսակների քանակը
1.	Աստղաձաղկազգիներ - Asteraceae	17	30
2.	Ակքանազգիներ - Dipsacaceae	1	2
3.	Ադամանակազգիներ - Verbenaceae	1	1
4.	Ապուզանազգիներ - Epilobiaceae	1	3
5.	Բակլազգիներ - Fabaceae	12	18
6.	Բոշխազգիներ - Cyperaceae	2	3
7.	Գադտրիկազգիներ – Borraginaceae	8	16
8.	Գադազգիներ - Cuscutaceae	1	3
9.	Գնարբուկազգիներ - Primulaceae	2	5
10.	Գորտնուկազգիներ - Ranunculaceae	5	9
11.	Դաշտավուկազգիներ - Poaceae	20	26
12.	Եղինջազգիներ - Urticaceae	1	2
13.	Զանգակազգիներ - Campanulaceae	1	2
14.	Խաչաձաղկավորներ - Brassicaceae	10	16
15.	Խլաձաղկազգիներ - Scrophulariaceae	5	7
16.	Խոլորձազգիներ - Orchidaceae	3	6
17.	Խուլիդիզազգիներ - Lamiaceae	20	28
18.	Ծնեքեկազգիներ – Asparagaceae	1	2
19.	Ծխաբույսազգիներ - Fumariaceae	1	2

20.	Կաթնախոտազգիներ - Polygalaceae	1	1
21.	Կակաչազգիներ - Papaveraceae	2	4
22.	Կերոնազգիներ - Typhaceae	1	1
23.	Հափուկազգիներ - Resedaceae	1	1
24.	Հիրիկազգիներ - Irisaceae	3	5
25.	Ճրագախոտազգիներ-Orobanchaceae	1	2
26.	Մանուշակազգիներ - Violaceae	1	3
27.	Մատիտնազգիներ - Polygonaceae	2	6
28.	Մելսակազգիներ - Caryophyllaceae	4	9
29.	Մորմազգիներ - Solanaceae	3	4
30.	Նեխուրազգիներ - Apiaceae	10	14
31.	Շուշանազգիներ - Liliaceae	8	10
32.	Շքանարգիզազգիներ - Amarilibaceae	2	2
33.	Ջղախոտազգիներ - Plantaginaceae	1	2
34.	Սրտհունդազգիներ - Hypericaceae	1	1
35.	Վարդազգիներ - Rosaceae	4	5
36.	Տուղտազգիներ - Althaceae	1	2
37.	Փիփերթազգիներ - Malvaceae	1	2

Այսպիսով, մեր ուսումնասիրությունների և դաշտային հետազոտությունների արդյունքում բացահայտվել է 255 տեսակի ծածկասերմ խոտաբույսեր, որոնք պատկանում են 159 ցեղերի և 37 ընտանիքների: Խոշոր կարգաբանական խմբերը ներկայացված են հետևյալ հարաբերակցությամբ՝ Երկշաքիլավորների դաս – 196 տեսակ, Միշաքիլավորների դաս – 59 տեսակ: Հադրութի շրջանի ֆլորայի ծածկասերմ խոտաբույսերը ներկայացված են կենսաձևերի հետևյալ հարաբերակցությամբ՝ բազմամյա - 146, երկամյա - 45, միամյա - 64 տեսակ: Բազմամյա խոտաբույսերի մեծ մասն աչքի են ընկնում լայն էկոլոգիական ամպլիտուդայով՝ աճելով ինչպես պնտրոֆիլ, այնպես էլ մարգագետնային համակեցություններում, իսկ որոշները նաև խոնավ տարածքներում: Ինչ վերաբերվում է երկամյաներին և միամյաներին, ապա դրանց գերակշռող մասն աճում են քարացրոններում և չոր թերություններում:



Նկ. 1 Երեքնուկ մարգագետնային


Հադրութի շրջանի ֆլորիստական սպեկտրում առաջատար տեղ են գրավում հետևյալ ընտանիքները՝ աստղաձևազգիները /*Asteraceae*/, բակլազգիները /*Fabaceae*/, գորտնուկազգիները /*Ranunculaceae*/, խուլեղինջազգիները /*Lamiaceae*/, վարդազգիները /*Rosaceae*/, մելսակազգիները /*Caryophyllaceae*/, շուշանազգիները /*Liliaceae*/, դաշտավուկազգիները /*Poaceae*/: Ճրագախոտազգիներից առավել տարածված է դեղին ճրագախոտը /*Orobanche lutea*/, որը հայտնաբերվել է ցածրադիր շրջաններում՝ առվույտի, երեքնուկի և մյուս բակլազգի բույսերի արմատների վրա: Ինչպես բոլոր պարազիտների, այնպես էլ ճրագախոտների կենսագործունեությունը կապված է մշակովի կամ

վայրի կանաչ բույսերի հետ: Յողունային պարազիտներից տարածված են գաղձազգիների ընտանիքին պատկանող գաղձ եկրոպական /*Cuscuta europaea*/, գաղձ նրբացողուն /*Cuscuta approximata*/ տեսակները, որոնք պարազիտում են բանջարանոցային բույսերի և մարգագետնային բուսականության վրա, իսկ արմատային կիսապարազիտներից առավել տարածված է խլածաղկազգիների ընտանիքին պատկանող մեծ խլխլանը /*Alectrolophus major*/, որը պարազիտում է հատկապես աշնանացան հացաբույսերի արմատների վրա:

Ցեղային սպեկտրում գերիշխող են երեքնուկ /*Trifolium*/ [նկ.1], ամպույտ /*Medicago*/, կորնգան /*Onobrychis*/, եղնապակ /*Salvia*/, կատվադաղձ /*Nepeta*/, ծվժվուկ /*Silene*/, մատիտնե /*Polygonum*/, խատուտիկ /*Taraxacum*/, օշինդր /*Artemisia*/, տերեփուկ /*Centaurea*/, սիզախոտ /*Phleum*/, խոզանուկ /*Setaria*/, շյուղախոտ /*Festuca*/, դաշտավուկ /*Poa*/, փնտրախոտ /*Stipa*/ ցեղերը:

Հադրութի շրջանի ֆլորայի գերիշխող ընտանիքների տարածվածությունը

Քարտեզ 1



△ Աստղածաղկազգիներ ✧ Բակլազգիներ ⊙ Դաշտավուկազգիներ ○ Խուլեղինզազգիներ

Գրականություն

1. Այվազյան Հ. Մ., Ալեքսանյան Գ. Վ., Հայաստանի բնաշխարհ, Երևան, 2006:
2. Կարապետյան Ռ. Ս., Հայաստանում տարածված մոլախոտերի ատլաս, Երևան, 1980:
3. Հովհաննիսյան Ջ. Հ., Կանաչ դեղատուփ, Երևան, 2005:
4. Гроссгейм А. А., Флора Кавказа, 1 - 3 т, Баку, 1940 – 1945.

Резюме

В результате ботанических исследований выявлено таксономическое разнообразие цветковых травянистых растений флоры Гадрутского района, а также представлены биологические особенности преобладающих таксонов.

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏՆՆԵԿԱԳԻՐ
 УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА